ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 31.08.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 86/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Խաչպար» ՍՊԸ-ի 12.08.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ««Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը, «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը և բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 29.08.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Խաչպար» ՍՊԸ-ն 12.08.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ««Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 2016թ. ապրիլի 27-ի թիվ 2 որոշմամբ հաստատել է ««Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «Դեղորայքի և պատվաստանյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը:

Հրավերի թիվ 27 և 33 չափաբաժինների տեխնիկական բնութագրերի «Անվանում» և «Բնութագիր» սյունյակներում Պատվիրատուի կողմից նշված են գնման առարկաների հատկանիշները բնութագրող այնպիսի կոնկրետ տոկոսներ, կշռաչափեր, ծավալի և ազդող նյութերի այնպիսի թվեր, որոնք հանգեցրել են գնման գործընթացում «Խաչպար» ՍՊԸ-ի համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և գնման գործընթացի խտրական հիմունքներով կազմակերպմանը, որի հետևանքով գնման գործընթացը տնտեսող, արդյունավետ և օգտավետ կերպով չի իրականացվել, ինչը հանգեցրել է ոչ համարժեք հատուցմամբ ապրանքների ձեռքբերմանը:

«Խաչպար» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել ««Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. ապրիլի 27-ի թիվ 2 որոշմամբ հաստատված հրավերի տեքստը հաստատելու մասին որոշումը՝ թիվ 27 և 33 չափաբաժինների մասով:

Միևնույն ժամանակ Ընկերությունը խնդրել է կիրառելով ժամանակավոր միջոց՝ կասեցնել «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.08.2016թ. նիստի թիվ 13 արձանագրության թիվ 2 կետով կայացված որոշումը՝ թիվ 27 և 33 չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու մասին:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 18.08.2016թ. ժամը 16:00-ին ԳԲԽ-86/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնել է, որ ընթացակարգի հրավերով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրերը կազմված են սխալ, նշված են գնման առարկաների հատկանիշները բնութագրող այնպիսի կոնկրետ տոկոսներ, կշռաչափեր, ծավալի և ազդող նյութերի այնպիսի թվեր, որոնք հանգեցրել են գնման գործընթացի խտրական կազմակերպմանը:

2. ««Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

««Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 19.08.2016թ. թիվ 90 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ դեռ 2008 թվականից «Նորք» ինֆեկցիոն կլինկական հիվանդանոցում **Դիքլորոիզոցիանաթթվի նատրիումական աղ(50%),2.5գ ազդող նյութով, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է 1,76գ ակտիվ քլոր, դեղահատեր դյուրալույծ (վարակազերծիչ)** ախտահանիչ նյութի տարբեր խտություններն օգտագործելով, ինչը կատարվել է հիվանադանոցի լաբորատորիայի հսկողության տակ, եկել են այն եզրահանգմանը, որ նշված ախտահանիչ նյութը լավագույն ազդեցությունն է ունեցել ախտածին միկրոօրգանիզմների վրա, որի արդյունքում որևիցէ անգամ չի արձանագրվել ներհիվանդանոցային վարակի դեպք, ինչի մասին վկայում են ամենամյա կատարված ստուգումները համապատասխան ծառայությունների կողմից, ինչպես նաև ամենամյա բժշկական հետազոտությունները ցույց են տվել, որ տվյալ ախտահանիչ նյութը որևիցէ բացասական ազդեցություն չի թողնում բուժանձանակազմի առողջության վրա:

Վերը նշված ախտահանիչ նյութի արդյունավետության մասին վկայում են նաև հիվանդանոցի ախտորոշիչ մանրէաբանական լաբորատորիայի կողմից ամենամսյա կատարվող ախտահանման որակի հսկողության, նախամանրէազերծման, մանրէազերծման որակի և օդի մանրէաբանական հսկողության հետազոտությունները, որոնք կատարվում են՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 10.09.2015թ. N48-Ն հրամանի (<<Բժշկական նշանակության արտադրատեսակների մաքրմանը, ախտահանմանը, նախամանրէազերծման մշակմանը և մանրէազերծմանը ներկայացվող պահանջներ>> N3.1.1-029-2015 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը հաստատելու մասին):

Հետազոտությունների արդյունքները գրանցվում են հիվանդանոցում վարվող համապատասխան գրանցամատյաններում:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 18.08.2016թ. ժամը 16:00-ին ԳԲԽ-86/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ ««Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի ներկայացուցիչներն առարկել են բողոքի դեմ և հայտնել են, որ ընթացակարգի հրավերով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրերը կազմված չեն խտրականորեն, նշված գնման առարկաների հատկանիշները բնութագրող կշռաչափերը, ազդող նյութերի տոկոսները

նշված են կոնկրետ, քանի որ իրենց հիվանդանոցին անհրաժեշտ են հենց տվյալ կշռաչափերը, իսկ կոնկրետ տոկոսները նշվել են, քանի որ նշված տոկոսից պակասը բավարար չէ ախտահանումը կատարելու համար, իսկ ավել տոկոսն իրենց հարկավոր չէ:

3. ԳԲԽ-86/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 29.08.2016թ. եզրակացությունը և առաջարկել է «Խաչպար» ՍՊԸ-ի 12.08.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

4. ԳԲԽ-86/16 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-86/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ««Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ն՝ 27-րդ և 33-րդ չափաբաժինների մասով:

2. ««Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի (այսուհետև նաև՝ Հրավեր) N 1 հավելվածում՝ տեխնիկական բնութագրի «Անվանումը» սյունակում, 27-րդ չափաբաժնով սահմանված է՝ ***«Դիքլորոիզոցիանաթթվի նատրիումական աղ (50%), 2.5գ ազդող նյութով, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է 1.76գ ակտիվ քլոր, դեղահատեր դյուրալույծ (վարակազերծիչ, 5գ դեղահատեր դյուրալույծ***:

3. Հրավերի N 1 հավելվածում՝ տեխնիկական բնութագրի «Անվանումը» սյունակում, 33-րդ չափաբաժնով սահմանված է՝ ***«Էթանոլ 70%, պոլիհեքսամեթիլեն-գուանիդինի հիդրոքլորիդ 0.4%, փաթեթավորումը 1000մլ, ձեռքերի հիգիենիկ, վիրաբուժական մշակման և վիրաբուժական դաշտի մշակման համար»***:

4. «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 27-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ «***Դիքլորոիզոցիանաթթվի նատրիումական աղ դեղահատեր դյուրալույծ - համամարժեք՝ «Դիմաքս քլոր»***, տեխնիկական հատկանիշները՝ ***ազդող նյութ է հանդիսանում դիքլորիզոցիանուրային թթվի նատրումական աղը, 1 հաբը կշռում է 2,7 գրամ, որի լուծման ժամանակ անջատվում է 1,5 գ ակտիվ քլոր*** և այլն:

5. «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 33-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ ***«Էթանոլ 70%, պոլիհեքսամեթիլեն-գուանիդինի հիդրոքլորիդ 0.4%, փաթեթավորումը 1000մլ*** - համարժեք՝ ***«Դիասեպտիկ 30»***, տեխնիկական հատկանիշները՝ ***պոլիհեքսամեթիլեն – գուանիդինի հիդրոքլորիդ 0,25 %***, փաթեթավորումը 1000մլ պոլիէթիլենային տարաներով:

6. Կենտրոնը 15.07.2016թ. գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարությանը՝ խնդրելով հայտնել տեղեկատվություն մի շարք ախտահանիչ միջոցների, այդ թվում նաև՝ **«Պրեսեպտ»** և **«Դիմաքս քլոր»**, ազդող նյութերի, նրանց ֆիզիկո-քիմիական տվյալների, կիառման ոլորտների ու նպատակների, ցուցաբերած ախտահանիչ էֆեկտիվության չափորոշիչների **համարժեքության** վերաբերյալ:

7. ՀՀ առողջապահության նախարարությունը, ի պատասխան Կենտրոնի 15.07.2016թ. գրության, 15.08.2016թ. ԱԿ/9003-16 գրությամբ հայտնել է, որ նշված բոլոր **ախտահանիչ միջոցները համարժեք են:**

8. «Պրեսեպտ» ախտահանող նյութի մեթոդական հրահանգի համաձայն՝ ***«Պրեսեպտ»*** միջոցը իր մեջ պարունակում է ***նատրիումական աղ (50%)*** քանակությամբ և արտադրվում է երկու ձևով՝ ***հաբեր 5.0գ*** և 1.0գ քաշով, 5.0գ հաբի լուծման ժամանակ անջատվում է ***1.44-1.76գ ակտիվ քլոր:***

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 12.08.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Պատվիրատուի գրավոր դիրքորոշումը և ներկայացված փաստաթղթերը, Ընթացակարգի հրավերը, ՀՀ առողջապահության նախարարության 15.08.2016թ. ԱԿ/9003-16 գրությունը, «Պրեսեպտ» ախտահանող նյութի մեթոդական հրահանգը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), գտնում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի 12.08.2016թ. ներկայացրած բողոքը ենթակա է մասնակի բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝

«1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի ***միասնական կանոններով, մրցակցային,*** թափանցիկ, հրապարակային և ***ոչ խտրական հիմունքներով*** կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով ***մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.***

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ***գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:*** (...)»:

Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության ***հավասար պայմաններ*** ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված ***խոչընդոտների առաջացմանը.***

3) պետք է լինեն ***օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.***

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ***ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:»***

Հրավերի ուսումնասիրությունից երևում է, որ դրա տեխնիկական բնութագրի 27-րդ չափաբաժնով սահմանված են ախտահանող նյութի այնպիսի կոնկրետ տվյալներ, մասնավորապես՝ Դիքլորոիզոցիանաթթվի նատրիումական աղ ***(50%)***, ***5գ*** դեղահատեր, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է ***1.76գ*** ակտիվ քլոր, որոնց տվյալ Ընթացակարգում առաջարկվող ապրանքներից կարող է բավարարել միայն «Պրեսեպտ» ախտահանող նյութը, իսկ վերջինիս համարժեք (ըստ ՀՀ առողջապահության նախարարության 15.08.2016թ. ԱԿ/9003-16 գրության) այլ ախտահանող նյութերը պարզապես չեն կարող բավարարել Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

Ելնելով վերը շարադրվածից՝ Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն, Հրավերի 27-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում վերը նշված ձևով կոնկրետ տվյալներ սահմանելով, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման առարկայի բնութագրերը կազմելու պահանջները, ինչպես նաև Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, ոչ խտրական հիմունքներով կազմակերպման, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման, ինչպես նաև գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքները:

Ինչ վերաբերում է Հրավերի 33-րդ չափաբաժնով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրին, ապա Խորհուրդը գտնում է, որ բողոքաբերի կողմից չի հիմնավորվել նշված չափաբաժնով գնման առարկայի բնութագիրը Օրենքի պահանջներին ոչ համապատասխան կազմված լինելու փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով, 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Խաչպար» ՍՊԸ-ի 12.08.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի՝ դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին 27.04.2016թ. թիվ 2 որոշմամբ հրավերի տեքստը հաստատելու մասին որոշումը՝ թիվ 27 չափաբաժնի մասով:

2. «Խաչպար» ՍՊԸ-ի 12.08.2016թ. ներկայացրած բողոքը մնացած մասով մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Գոռ Ենոքյան**

Անդամ՝ **Արմեն Սարգսյան**